ԱՐՀԵՍՏԱՎԱՐԺ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԱԿԱԴԵՄԻԱ

Խորհրդանիշի հայեցակարգը հիմնված է այն գաղափարի վրա, որ կառավարման համակարգն աստիճանական անցում է կատարում ներքևից վերև՝ տեղական ինքնակառավարումից դեպի պետական կառավարում:
Խորհրդանիշն ունի գրքի տեսք, որը պատկերում է հայ ավանդական ձեռագիր մատյան՝ իր հոգևոր-մշակութային բացառիկ արժեքով:

Խորհրդանիշի ներսում «Հայաստանի Հանրապետություն» բառակապակցության սկզբնատառերն են՝ լուծված գլխատառերով, որոնք զուգահեռվում են հայկական լեռների գծապատկերին:
Աջ մասում հայ ճարտարապետության մեջ օգտագործվող՝ հելլենիստական մշակույթին բնորոշ հոնիական սյունն է, որը խորհրդանշում է պետականության գերակայությունը:
Ներքևի ձախ անկյունում Տիգրան Մեծի շրջանին բնորոշ ութաթև աստղն է, որը խորհրդանշում է կրթության լույսը՝ լուծված դարբնոցի քուրայի խորհրդապատկերով:
Ներքևի մասում հորիզոնական դիրքով գրված է «ՊԵՏԱԿԱՆ» բառը, իսկ հոնիական սյան ձախ մասում ուղղահայաց դիրքով՝ «ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԱԿԱԴԵՄԻԱ» բառերը:
Խորհրդանիշի գերիշխող գույնը հայկական ձեռագրային մշակույթում տարածված լաջվարդն է՝ երկնագույնը, որը խորհրդանշում է խաղաղ երկնքի ներքո հայ ժողովրդի ապրելու կամքը:

ՀՀ պետական կառավարման ակադեմիայի խորհրդանիշի հեղինակը ճարտարապետ Միքայել Միսակյանն է:

ՌԵԿՏՈՐԻ ՈՒՂԵՐՁ

Սիրելի՛ դիմորդներ, ՀՀ պետական կառավարման ակադեմիայի ապագա ուսանողներ
Եթե դուք որոշել եք Ձեր ուսումնառությունը շարունակել ՀՀ պետական կառավարման ակադեմիայում, նշանակում է անտարբեր չեք մեր երկրում տեղի ունեցող ներկա և ապագա գործընթացների հանդեպ: Ավելին, Դուք ցանկանում եք մասնակիցը դառնալ այդ գործընթացների և Ձեր հնարավորությունների չափով նպաստել Հայաստանի Հանրապետության կայունությանն ու զարգացմանը:
Վստահ եղե՛ք, որ ընտրել եք հենց ա՛յն կրթական հաստատությունը, որտեղ պատրաստվում են կառավարման ոլորտի լավագույն մասնագետները, և որտեղ վերապատրաստվում են պետական կառավարման համակարգի տասնյակ հազարավոր ծառայողներ:
Հենց դա է ՀՀ պետական կառավարման ակադեմիայի գլխավոր առաքելությունը, որը պատվով իրականացնելու համար կրթօջախն ունի բավարար ներուժ, բազմափորձ ու գիտակ պրոֆեսորադասախոսական կազմ, կրթության գործի կազմակերպման հրաշալի մասնագետներ:
Կրթություն ստանալով ՀՀ պետական կառավարման ակադեմիայում՝ շատ շուտով դուք ձևավորելու եք առաջնորդների այն գալիք սերունդը, որն ստանձնելու է պետական կառավարման համակարգի խնդիրները լուծելու պատասխանատվությունը: Իսկ այդ բարդ խնդիրները լուծելու, առկա և հնարավոր մարտահրավերներին դիմակայելու ամենահուսալի հիմքը այն գիտելիքներն են, որ ձեռք կբերեք այստեղ ուսանելու տարիներին:
Ուրեմն՝ բարի գալուստ ՀՀ պետական կառավարման ակադեմիա:

ՄԵՐ ՃԱՆԱՊԱՐՀԸ

1994

Հայաստանի Հանրապետության պետական կառավարման ակադեմիան Հայաստանի Հանրապետության կառավարման դպրոցի իրավահաջորդն է, որը հիմնվել է 1994 թվականի մայիսի 24-ին:

2002

ՀՀ Կառավարության 2002 թ. ապրիլի 8-ի թիվ 338 որոշմամբ, Հայաստանի Հանրապետության կառավարման դպրոցը վերակազմակերպվեց «Հայաստանի Հանրապետության պետական կառավարման ակադեմիա» պետական ոչ առևտրային կազմակերպության:

2003

ՀՀ Կառավարության 2003 թ. ապրիլի 10-ի թիվ 370 որոշմամբ, Ակադեմիայում հիմք դրվեց մագիստրոսական ծրագրերով ուսուցման:

ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՇՐՋԱՆԱԿԸ

- Բարձրագույն մասնագիտական (մագիստրատուրա) և հետբուհական (ասպիրանտուրա, դոկտորանտուրա, հայցորդություն) ծրագրերի իրականացում
- Լրացուցիչ և շարունակական կրթություն (վերապատրաստում)
- Գիտական և կիրառական հետազոտական աշխատանքների կատարում
- Պետական կառավարման ոլորտում գիտական հիմնարար և կիրառական հետազոտություններ
- Միջազգային գիտակրթական համագործակցություն

ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ԱՌԱՎԵԼՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

- **Մրցունակ կադրեր աշխատաշուկայում**
- **Շրջանավարտների աշխատանքի տեղավորման բարձր ցուցանիշ**
- **Բարձր որակավորում ունեցող պրոֆեսորադասախոսական կազմ** (արհեստավարժ մասնագետներ և հանրային պաշտոններ զբաղեցնող անձինք)
- **Համագործակցություն արտասահմանյան բուհերի հետ** և լավագույն փորձի կիրառություն
- **Ուսանողամետ կրթություն**
- **Ուսանողների փոխանակման ծրագրեր**
- **Արդիական ուսումնական ծրագրեր**
- **Տեխնիկական և նյութատեխնիկական ռեսուրսներով ապահովում**
- **Բարձր կրթաթոշակ (48.600 ՀՀ դրամ)**

ՄԱԳԻՍՏՐՈՍԻ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐՈՎ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. ԿԱՌԱՎԱՐՈՒՄ

Կրթական ծրագրերը

- Հանրային կառավարում
- Հանրային ֆինանսների կառավարում
- Պետական կառավարում և տեղական ինքնակառավարում
- Գործարար վարչարարություն – MBA (երեկոյան ուսուցում)
- Գործարար վարչարարություն – MBA (հեռավար ուսուցում)
- Զբոսաշրջության կառավարում - (երեկոյան ուսուցում)
- Մարդկային ռեսուրսների կառավարում - (երեկոյան ուսուցում)

2. ԻՐԱՎԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

Կրթական ծրագիրը

- Իրավագիտություն

4. ՔԱՂԱՔԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

Կրթական ծրագրերը

- Գլոբալ կառավարում և տարածաշրջանային քաղաքականություն
- Քաղաքական կառավարում և քաղաքական վերլուծություն
- Քաղաքական ժուռնալիստիկա և PR տեխնոլոգիաներ

5. ՀՈԳԵԲԱՆՈՒԹՅՈՒՆ

Կրթական ծրագիրը

- Կառավարման հոգեբանություն

ՀԵՌԱՎԱՐ ՄԱԳԻՍՏՐՈՍԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅՈՒՆ

ՀՀ պետական կառավարման ակադեմիան 2017 թվականից իրականացնում է հեռավար ուսուցում «Գործարար վարչարարություն (MBA)» մագիստրոսական կրթական ծրագրով: «Գործարար վարչարարություն» կամ MBA (Master of Business Administration) կրթական ծրագիրը պատրաստում է բիզնես-ոլորտի կառավարման մասնագետներ: Հաշվի առնելով բիզնես-ոլորտի դերը Հայաստանի Հանրապետության տնտեսության զարգացման գործում, ինչպես նաև բիզնեսի կառավարման մասնագետների ոչ բավարար քանակը՝ ՀՀ պետական կառավարման ակադեմիան «Գործարար վարչարարություն» կրթական ծրագիրն իրականացնում է նաև հեռավար ձևաչափով: Հեռավար ուսուցման առավելությունը կրթություն ստանալու հնարավորությունն է՝ չհեռանալով բնակության վայրից և չկտրվելով աշխատանքից, ինչպես նաև կրթության մատչելիությունը և հասանելիությունը ապահովելը:

ՖՐԱՆՍԱՀԱՅ ԲԱՐԵՐԱՐ ՌԱՅՄՈՆԴ ԵԶԵԳԵԼՅԱՆԻ ԿՈՂՄԻՑ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՎՈՂ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ԾՐԱԳԻՐ

Իրավաբանական մասնագիտացումների հայ-ֆրանսիական ֆեդերացիայի նախագահ, Ակադեմիայի գործընկեր, ֆրանսահայ բարերար Ռայմոնդ Եզեգելյանը ամեն տարի ֆինանսական աջակցություն է ցուցաբերում կրթօջախի շուրջ երկու տասնյակ ուսանողի: Բարերարի անվան միանվագ կրթաթոշակի շահառուները բարձր առաջադիմություն ունեցող, սահմանամերձ բնակավայրերում ապրող, մարտական գործողությունների մասնակցած կամ պայմանագրային զինվորական ծառայության մեջ գտնվող, սոցիալապես անապահով և հիմնական բնակության վայրից տեղահանված մագիստրանտներն են:

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ

Ակադեմիան իրականացնում է Եվրամիության Էրազմուս+ ծրագրի «Բարձրագույն կրթության կարողությունների զարգացում» SMARTI (Աջակցություն անգլերենով դասավանդելու նորարարական մեթոդաբանությանը, մոտեցումներին և գործիքակազմի կիրառմանը՝ կրթության արդյունավետությունը, կայունությունը և միջազգայնացումը բարելավելու նպատակով) և Ժան Մոն գործողության PROMOEU (Եվրոպագիտության խթանումը Հայաստանում) ծրագրերը, ինչպես նաև մասնակցում է դասախոսների և ուսանողների կրեդիտների միջազգային շարժունության ծրագրերի:

Միջազգային ծրագրերի շրջանակներում Ակադեմիան համագործակցում է արտասահմանյան մի շարք բուհերի հետ.

- Զալցբուրգի համալսարան (Ավստրիա)
- Գրոդնոյի պետական բժշկական համալսարան (Բելառուսիա)
- Բիհաչի համալսարան (Բոսնիա և Հերցեգովինա)
- Դրեզդենի տեխնոլոգիական համալսարան (Գերմանիա)
- Շենոնի տեխնիկական համալսարան (Իռլանդիա)
- Ռիգայի տեխնիկական համալսարան (Լատվիա)
- Բեյրութի Հայկազեան համալսարան (Լիբանան)
- Լիտվայի պետական կառավարման դպրոց (Լիտվա)
- Միկոլաս Ռոմերիս համալսարան (Լիտվա)
- Լոյոլայի գործարար վարչարարության ինստիտուտ (Հնդկաստան)
- Լիվերպուլի Ջոն Մուրս համալսարան (Միացյալ Թագավորություն)
- Մոլդովայի Հանրապետության պետական կառավարման ակադեմիա (Մոլդովա)
- Շանհայի միջազգային հետազոտությունների ինստիտուտ (Չինաստան)
- Պորտոյի կաթոլիկ համալսարան (Պորտուգալիա)
- Տիմիշորայի արևմտյան համալսարան (Ռումինիա)
- Տրանսիլվանիա համալսարան (Ռումինիա)
- Բրաշովի Տրանսիլվանիայի համալսարան (Ռումինիա)
- Բելգորոդի պետական ազգային հետազոտական համալսարան (Ռուսաստան)
- Խարկովի պոլիտեխնիկական ինստիտուտի ազգային տեխնիկական համալսարան (Ռուսաստան)
- Մորդովիայի Ն. Պ. Օգարյովի անվան պետական համալսարան (Ռուսաստան)
- ՌԴ Նախագահին կից Ռուսաստանի ժողովրդական տնտեսության և պետական ծառայության ակադեմիա (Ռուսաստան)
- Ռուսաստանի գիտությունների ակադեմիայի հոգեբանության ինստիտուտ (Ռուսաստան)
- Մանարա համալսարան (Սիրիա)
- Մարիբորի համալսարան (Սլովենիա)
- Կիևի Մոհիլա ակադեմիայի ազգային համալսարանի հակակոռուպցիոն հետազոտությունների և կրթական կենտրոն (Ուկրաինա)
- Ուկրաինայի քաղաքացիական պաշտպանության ազգային համալսարան (Ուկրաինա)
- Միավորված ազգերի կազմակերպության տնտեսական և սոցիալական հանձնաժողովի Ասիայի և Խաղաղօվկիանոսյան ավազանի երկրների տեղեկատվական և հաղորդակցության տեխնոլոգիաների զարգացման կենտրոն (UN–AP-CICT/ESCAP) և այլ գիտակրթական հաստատություններ:

ԳԻՏԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ

Ակադեմիան ունի ասպիրանտուրա իրականացնելու թույլտվություն հետևյալ մասնագիտություններով՝

1. Հանրային իրավունք
2. Տնտեսության, նրա ոլորտների տնտեսագիտություն և կառավարում
3. Քաղաքական ինստիտուտներ և գործընթացներ
4. Հոգեբանության տեսություն և պատմություն

Ակադեմիայի կարևորագույն գիտական առաքելությունն է՝ արձագանքել Հայաստանի Հանրապետությունում կառավարման կարիքներին, առավելագույնս աջակցել հանրային ծառայության արդիականացման խնդիրներին, խթանել նորարարական գործընթացները հանրային կառավարման բնագավառում:
Ակադեմիայում կազմակերպվում են մասնագիտական ուղղվածությամբ գիտաժողովներ, կլոր սեղաններ՝ գիտնականների, պետական կառավարման համակարգի ներկայացուցիչների, մագիստրանտների, ասպիրանտների, ինչպես նաև արտերկրի տարբեր գիտական հաստատություններում դասավանդող դասախոսների մասնակցությամբ:

ՈՐԱԿԻ ՆԵՐՔԻՆ ԱՊԱՀՈՎՈՒՄ

Ակադեմիան, կարևորելով բարձրագույն կրթության ոլորտում տեղի ունեցող փոփոխությունները, նորագույն մարտահրավերները կանխատեսելու և դրանց արձագանքելու, շահառուների կարիքները լավագույնս բավարարելու, կրթության որակը և արդյունավետությունը էապես բարձրացնելու անհրաժեշտությունը, իր գործունեությունն իրականացնում է մրցունակ մասնագետների պատրաստման, մասնագիտական կրթական ծրագրերի բազմազանեցման, կառավարման

գործընթացների կանոնակարգման, ֆինանսական կայունության ապահովման և այլ ուղղություններով:
Ակադեմիայի որակի ներքին ապահովման գործընթացն իրականացվում է հետևյալ փոխկապակցված բաղադրիչների արդյունավետ գործառման միջոցով.

- *որակի մշակույթի տարածմանը նպաստող կառավարման գործուն կառուցակարգերի ներդրում,*
- *հրապարակայնության, թափանցիկության, հաշվետվողականության ապահովում,*
- *կրթական ծրագրերի և ուսումնաօժանդակ ծառայությունների իրականացման համար համապատասխան ռեսուրսների ապահովում,*
- *Ակադեմիայի ներքին և արտաքին շահակիցների կարիքների բավարարմանն ուղղված գործընթացների շարունակական իրականացում,*
- *Ակադեմիայի որակի ներքին և արտաքին ապահովման կառուցակարգերի արդյունավետ գործադրում և որակի շարունակական բարելավման մշակույթի խթանում:*

ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

ՀՀ ՊԿԱ ուսանողական խորհուրդն ապահովում է Ակադեմիայի ուսանողների ինքնակառավարման գործընթացները, արտահայտում և պաշտպանում է նրանց շահերը: Ուսանողական խորհրդի դերը մեծ է սովորողների իրավունքների պաշտպանության, կրթական, գիտական, սոցիալական և այլ կարիքների վերհանման գործում: Ակադեմիայի ուսանողական խորհուրդն աջակցություն է ցուցաբերում ուսումնական գործընթացի կատարելագործման և բարելավման հարցերում, անհրաժեշտության դեպքում մասնակցում է Ակադեմիայի կողմից կազմակերպվող գիտահետազոտական աշխատանքներին, կապեր է հաստատում հայաստանյան բուհերի ուսանողական ինքնակառավարման կառույցների հետ, ինչպես նաև համագործակցության եզրեր փնտրում արտասահմանյան բուհերում սովորող ուսանողների հետ:

Ակադեմիայում գործում է Ուսանողական գիտական ընկերություն: Ընկերության նպատակը մագիստրանտների, ասպիրանտների և հետազոտողների գիտական, հետազոտական, ստեղծագործական և հոգևոր զարգացմանը նպաստելն է:

ԼՐԱՑՈՒՑԻՉ ԵՎ ՇԱՐՈՒՆԱԿԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅՈՒՆ

Ակադեմիան իր գործունեության ողջ ընթացքում կարևոր դերակատարում է ունեցել հանրային ծառայողների վերապատրաստման համակարգի կայացման, վերապատրաստման ծրագրերի մշակման գործում:
Կուտակված փորձով և կազմակերպվածության մակարդակի բարձրացմամբ պայմանավորված՝ այսօր արդեն Ակադեմիայի վերապատրաստման դասընթացներին մասնակցում են տարեկան շուրջ 3000 քաղաքացիական ծառայողներ, համայնքների ղեկավարներ, ավագանու անդամներ և պետական ծառայողներ:
Ակադեմիայում կազմակերպվող վերապատրաստման դասընթացներին մասնակցում են՝

- քաղաքացիական ծառայողները
- տեղական ինքնակառավարման մարմինների անդամները (համայնքների ղեկավարներ և ավագանու անդամներ)
- ՀՀ Ազգային ժողովի աշխատակազմի պետական ծառայողները
- ՀՀ պաշտպանության նախարարության աշխատակազմի քաղաքացիական ծառայողները

Վերապատրաստման ծրագրերը մշակվում և իրականացվում են վերապատրաստման կարիքի բացահայտման և գնահատման մեթոդաբանության հիման վրա:
Իրականացվում են նաև անհատական, կորպորատիվ վճարովի կարճաժամկետ, երկարաժամկետ և անգլերենով թեմատիկ վերապատրաստումներ («Մարդկային ռեսուրսների կառավարում (HR)», «Արդյունավետ կառավարման հմտություններ», «Գնումների գործընթացի կազմակերպում», «Հանրային կապեր (PR)», «Թոփ մենեջեր», «Ինովացիաների կառավարում» և այլն):

ՀՐԱՏԱՐԱԿՉԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ

Հանրապետությունում կատարվող գիտական աշխատանքները հանրությանը ներկայացնելու, լուսաբանելու և այդ ուղղությամբ իրականացվող բարեփոխումներին նպաստելու նպատակով ՀՀ պետական կառավարման ակադեմիան 2004 թվականից հրատարակում է «Հանրային կառավարում» գիտական հանդեսը:
Գիտական հանդեսի խմբագրական խորհրդի կազմում



ընդգրկված են ոչ միայն Հայաստանի, այլև արտասահմանյան երկրների հեղինակավոր մասնագետներ (ԱՄՆ, Բելառուս, Լիբանան, Կանադա, Չինաստան, Ռուսաստան, Ուկրաինա, Ֆրանսիա): Արտասահմանցի հեղինակների գիտական հոդվածները պարբերաբար տպագրվում են Ակադեմիայի գիտական հանդեսում:
Հանդեսն ունի «Հանրային կառավարում», «Տնտեսագիտություն և կառավարում», «Իրավագիտություն», «Քաղաքագիտություն» և «Հոգեբանություն» բաժինները:
Նյութերը հրապարակվում են հայերեն, ռուսերեն կամ անգլերեն և ուղեկցվում են հեղինակային ամփոփագրերով՝ նշված երեք լեզուներով:
«Հանրային կառավարում» գիտական հանդեսն ընդգրկված է ՀՀ բարձրագույն որակավորման կոմիտեի (ՀՀ ԲՈԿ) սահմանած դոկտորական և թեկնածուական ատենախոսությունների հիմնական արդյունքների և դրույթների հրատարակման համար ընդունելի պարբերական գիտական հրատարակությունների ցանկում:



ԳԻՏԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ

ՄԵԾԱԳՈՒՅՆ ԳԱՆՁԸ ԼԱՎ ԳՐԱԴԱՐԱՆՆ Է:
Բելինսկի

Ակադեմիայի գիտատեխնիկական գրադարանը, որպես ուսումնական հաստատության կարևորագույն օղակ, էական նշանակություն ունի հարուստ գիտելիքներով զինված, որակյալ մասնագետների պատրաստման, ուսումնական գործընթացի արդյունավետ կազմակերպման, գիտական հետազոտությունների իրականացման արդյունավետության բարձրացման, քաղաքակիրթ և տեղեկացված հասարակություն ձևավորելու գործում:
Ակադեմիայի գիտատեխնիկական գրադարանն անդամակցում է Հայաստանի էլեկտրոնային գրադարանների համագործակցությանը, ինչը հնարավորություն է ընձեռում օգտվելու EBSCOhost, eLIBRARY, Springer LINK էլեկտրոնային շտեմարաններից:

Գրադարանի հագեցվածությունը.
- ավելի քան 17 300 միավոր գրականություն,
- ինտերնետ հասանելիություն ապահովող համակարգիչներ,
- բազմաֆունկցիոնալ տպիչ սարքեր, տեսապրոյեկտոր, ինտերակտիվ գրատախտակ, տեսածիր (scan),
- WiFi կապ:

Մեր հասցեն՝
ՀՀ, 0028 ք. Երևան, Կիևյան 8
Հեռ. 374 10 26 92 59, ֆաքս՝ 22 89 42
էլ.փոստ՝ info@paara.am, aspa.paara@gmail.com,
Վեբ կայքը՝ www.paara.am